

Թ Ա Ն Գ Ա Ր Ա Ն

Հայկական հին և նոր դպրութեանց. Բ.

Անկանոն գիրք նոր կտակարանաց.

Վենետիկ. տպ. Ս. Ղազարով. 1898.

Կր. 8⁰. ԺԳ. + 491.

Վենետիկի Մխիթարեան միաբանութիւնը հանգուցեալ Մկրտիչ Էմինի յիշատակին հրատարակում է նրա կտակած դրամի տոկոսեօք մի ժողովածու, որի առաջին հատորը կոչւում էր *Թանգարան հին և նոր նախնաց*, իսկ այս երկրորդ հատորից սկսած պիտի կոչուի *Թանգարան հայկական հին և նոր դպրութեանց*, որ և աւելի պատշաճաւոր վերնագիր է: Հրատարակիչ հ. Եսայի Տայեցին յառաջաբանի մէջ ընդհանուր խօսքերով նիւթի մասին մի քանի գիտողութիւններ անելուց յետոյ, անցնում է այն ձեռագիրների համառօտ նկարագրին, որոնցից արտատպել է այս անվաւեր գրքերը: Ձեռագիրների մասին տրուած հակիրճ տեղեկութիւնից երևում է, որ այս նիւթերը պարունակող ձեռագիրներից հնագոյնը 1205 թուականիցն է, իսկ նորագոյնը 1897 թուականից:

Ահաւասիկ հատորիս բովանդակութիւնը.

Ա. Գիրք տղայութեան *Քրիստոսի*. ընդամենը ԻԸ գլուխ, որոնց մէջ երկարօրէն պատմուած է ս. Կուսի, Յովսէփի և Փրկչի մասին մինչև քարոզութիւնը: Իւրաքանչիւր գլխի ընթերցումից կարելի է տեսնել, որ հեղինակն յենում է գլխաւորաբար աւետարանների պատմածների ու ուշ ժամանակի բերանացի աւանդութիւնների վրայ: Բովանդակութիւնը ընդարձակած է երկար և վանական երևակայութիւնից բղխած աւելորդ և շատ անգամ անպատշաճ խօսակցութիւններով: Սյս մասի ըն.

Թերցանութիւնից թւում է մեզ, որ հեղինակը կամ Թարգմանիչը նոյն իսկ ս. Կուսի մասին երգուած շարականներէիցն է օգտուել, տեղի և անտեղի զետեղելով օրհներգութիւնների գովաբանութիւններն իւր պատմութեան ընթացքում:

Այսպիսի հրատարակութեանց հետաքրքրական մասն համեմատականն է, որ զլացել է մեզ տալու արգոյ հրատարակիչը: Քրիստոնէական գրականութեան մէջ վաղուց յայտնի են անվաւերական ս. գրքեր, որոնց աղբիւրները քննուած և ժամանակները որոշուած են, ափսոս որ հայ հրատարակիչը զլացել է համեմատելու հայկական այս բնագրերն օտարների հետ:

Գիրք տղայութեան Զրիստոսի. (Բ օրինակ) գլ. ԺԲ—ԻԷ.

Հատկոտորը ի գրոց տղայութեան Զրիստոսի.
Ա. գլ.—Ը.

Այս հատկոտորներն իրենց բովանդակութեամբ սկզբի մասն են կազմում տղայութեան աւետարանի և վերաբերում են ս. Կուսի ծնողացն, աւետման, մոգերի գալստեան, Եգիպտոս փախչելուն:

Բ. Երչատակարանը Պիղատոսի.

Գ. Թուղթը Պիղատոսի երկու խմբագրութիւն:

Դ. Թուղթ Լենտուկեայ Պորլիոսի զՅիսուսէ Նազովրեցւոյ:

Ե. Տեսիլ ս. Աստուածածնի. գլ. Ե. Միջնագրեան վանական երևակայութեան պտուղներ, որ լատինականից թարգմանուած են և կամ նրանց նմանութեամբ յօրինուած:

Քաղաքակրթական տեսակէտով շատ հետաքրքրական են այս տեսիլներն, որովհետեւ ժամանակի իդէալներն են ցոյց տալիս: Ս. Կուսի՝ դժոխքում տեսած բոլոր տանջուողներից մեծ մասը նրանք են, որոնք գէ-

պի հոգևորականներն ու եկեղեցու արտաքին պահանջներն այնքան էլ լարգանօք չեն վերաբերուել:

Այս անվաւերականների լեզուն առ հասարակ ուղիղ գրաբար է և ջանք է նկատուում աւետարանի ոճին նմանուելու, աչքի ընկնող ռամկաբանութիւնք օրինակողների գործ են և կամ ցոյց են տալիս ուշ ժամանակի թարգմանութիւն:

Մեր ձեռագրատուններն անթիւ նիւթ են պարունակում անվաւերի աստուածաբանական գրականութիւնից, գրանց ուսումնասիրութեան սկիզբը պիտի համարել այս հրատարակութիւնը, որի արժէքը սակայն աւելի բացորոշ կարելի է գնահատել, երբ առիթ ունենանք ձեռագրաց համեմատութիւններ անել և օտար գրականութիւնից թարգմանածն որոշել զուտ հայկականից: Անշուշտ հայ աղանդների լուսաբանութիւնը կախուած է այս անվաւերների քննութիւնից:

Ն. ՔԱՐԱՄԵԱՆՑ

